ԿԱՐՄՐԱՇԵՆ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռոման Առաքելյան

Հեռախոս՝ +374.77.775411

Բնակչություն՝ 225

Կարմրաշեն (նախկինում՝ Քյոթանլի, Քյոթանլու) գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող Վայոց լեռան ստորոտում, Հերհեր գետի վերին հոսանքի բարձրադիր սարավանդում: Ծովի մակարդակից բարձր է 2060 մ: Սահմանակից է՝ հյուսիս-արևելքից՝ Ջերմուկ, հարավ-արևելքից՝ Հերհեր, հարավ-արևմուտքից՝ Մալիշկա, հյուսիս-արևմուտքից՝ Գողթանիկ համայնքներին: Շրջակայքում կան անտառակներ: Մոտակայքում գտնվող հրաբխային խարամներն օգտագործվում են որպես շինարարական ավազ: Տեղանքը քամոտ է:

Գյուղի հիմնադրման տարեթիվը ստույգ չէ: Գյուղի շրջակայքում կան հնավայրեր և պատմաճարտարապետական կոթողներ: Գյուղից մեկ կմ հարավ-արևելք գտնվում է Պողոս-Պետրոս խաչքարը, հարավ –արևմուտքում խարաբաներ գյուղատեղին է, հյուսիս-արևմուտքում՝ Գենգարա գյուղատեղին: Խաչքարերը վերաբերում են 10-13րդ դարերին: Ղևոնդ Ալիշանը Կարմրաշենը է նույնացնում Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառում հիշատակվող Գուտենի գյուղին:

1963 թ այստեղ հիմնվել էր բանավան՝ Արփա-Սևան ջրատարի բանվոր-ծառայողների համար: Այժմյան գյուղի տարածքը բնակեցվել է 1916 թ-ից 1925 թ-ն Նախիջևանի Բաղամլու գյուղից ներգաղթածներով, ինչպես նաև Գնդեվազից, Վերնաշենից և այլ վայրերից եկածներով: Նույն շրջանում հարևան տարածքներից Կարմրաշեն են տեղափոխվել նաև ադրբեջանցիներ: 1988 թ-ին գյուղի ադրբեջանցի բնակչությունը տեղափոխվեց Ադրբեջան, իսկ նրանց փոխարեն գյուղ ներգաղթեցին մեծ թվով ադրբեջանահայեր, որոնց մեծ մասը հետագա տարիներին տեղափոխվեց այլ բնակավայրեր:

ՀՀ անկախությունից հետո գյուղի երիտասարդության նախաձեռնությամբ տեղանունները, որոնք ունեին թուրք-արաբա-պարսկական ծագում, վերանվանվեցին Կարմրաշենցի ճանաչված և նշանավոր մարդկանց անուններով. այդ վայրերում կառուցվեցին հուշաղբույրներ: 2001 թ-ի մարդահամարի տվյալներով գյուղում բնակվել է 318 մարդ, 2010 թ-ի տվյալներով՝ 289 մարդ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, ինչպես նաև հացահատիկների և կերային կուլտուրաների մշակությամբ:

Գյուղն ունի դպրոց, ակումբ, գրադարան, հեռախոսային ցանց, բուժկետ, խանութ: